# Եղիշե Չարենց

## Խրախճանք

Զահերն այնտեղ կասկածոտ
Ակնարկում են ու թարթում
Գիշերային, սակայն տոթ
Հմայքների թակարդում:
Այնտեղ շքեղ ու փարթամ,
Մանեկենի պես կիներ
Ծախում են սուտ խենթության
Թիթեղածայն ոսկիներ:
Ու մեռելի նման պաղ
Մարդիկ հոգնած ու դեղին
Այնտեղ լցվում են ուրախ
Խենթությունով հրեղեն:
Անցի՛ր մենակ: Կես մթում,
Ակնարկներով հրակեզ,
Հմայքներով անպատում
Կհմայեն նրանք քեզ:
Նստի՛ր այնտեղ: Թող նրանք
Սրահներում իրենց մութ
Վառեն կարմիր մի կրակ՝
Անհրապույր ու աղոտ:
Անհարազատ թող լինին
Կարոտակեզ քո հոգուն,
Թե երգերը նրանց հին,

Թե ժպիտները բեկուն:
Համոզի՛ր քեզ, որ վաղուց
Դու երազել ես սիրով
Ծախվող հմայքը այդ ուշ
Խրախճանքի ու սիրո:
Ու կդառնա ողջը սուտ,
Ու գինու պես քո հոգին
Հորդ՝ կթափվի նրանց մութ
Ու մահահոտ հատակին:
Ու էլ մինչև առավոտ
Պիտի մնաս նրանց հետ՝
Խրախճանքում նրանց տոթ,
Անիմաստ ու անհեթեթ:
Էլ հանձնվի՛ր մինչև լույս,
Որպես գերի մի անկամ
Խրախճանքին նրանց ուշ,
Անուրախ ու արնաքամ:
Ո՛չ մի վայրկյան չկասե
Թող հորձանքը ժրաջան
Հարբի՛ր սիրով նրանց սև,
Որ շրթերդ չճչան...